ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 258-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.07.2020Թ. N 223-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի ղեկավարի 21.07.2020թ. «Ինքնակամ կառուցված բնակելի գործառնական նշանակության ավտոտնակի և տնտեսական սենյակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 223-Ա որոշման 4-րդ կետում «0.0075» թվերի փոխարեն կարդալ «0.00673» թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 18

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 259-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.02.2020Թ. N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ, 10-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010 թիվ 186-Ն հրամանով, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի հատակագիծը, Կադաստրի կոմիտեի ՏՏԿ կողմից տրամադրված օրթոֆոտո լուսանկարները, Աքորի գյուղի գլխավոր հատակագիծը և կադաստրային քարտեզը, հաշվի առնելով, որ առաջին պետական գրանցման նպատակով Աքորի համայնքում կատարված քարտեզագրումը կատարվել է էական սխալներով, հիմք ընդունելով բնակելի տան զբաղեցրած հողամասի փաստացի տեղազննումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը կառուցվել է 1961 թվականին և նշված հատվածում առկա են այլ տնատիրությունների բնակելի տներ, որոնք նույնպես կադաստրային քարտեզի սխալի պատճառով չեն գծագրվել կամ գծագրվել են էական սխալներով, ինչն ապացուցում է Կադասրի կոմիտեի ՏՏԿ կողմից տրամադրված օրթոֆոտո լուսանկարներով,

քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Հաստատել Գառնիկ Սարգիսի Դալլաքյանին ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի գծային սահմանային չափերը և հողամասի 0.0498 հա մակերեսը՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից 05.08.2020 թվականին կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Տալ համաձայնություն՝ Գառնիկ Սարգիսի Դալլաքյանին ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի սահմանային չափերի և մակերեսի փոփոխությանը կադաստրային քարտեզում՝ համաձայն որակավորված անձի կողմից 05.08.2020 թվականին տրված հատակագծի:
3. Հաստատել Գառնիկ Սարգիսի Դալլաքյանին ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած 0.0498 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
4. Տալ համաձայնություն, որպեսզի Աքորի գյուղի կադաստրային քարտեզում կատարվի սույն որոշման 3-րդ կետում նշված փոփոխությունները:
5. Ալավերդի համայնքի Աքորի գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, փողոց 10, N 13 փոստային հասցե:
6. Բնակելի տան զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
7. Հողամասի սահմանները որոշվում է համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
8. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 27.02.2020թ. «06-002-ծածկագրում գտնվող բնակելի տան, բաց պատշգամբի, անասնագոմի և 0.0198 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, ավել օգտագործվող 0.03 հա մակերեսով սահմանազատված հողամասն օրենքի ուժով սեփական համարելու, հողամասում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 57-Ա որոշման 2-րդ կետը.«Ալավերդի քաղաքի Սանահին Կայարան թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002) բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Կայարան թաղամաս, N 117 փոստային հասցե»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 18
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 260-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 1 ԲՇՏ» ԵՎ «ԹԻՎ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԶՄԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ 67-րդ հոդվածի 1-ին կետի և ենթակետով ***որոշում եմ***՝

1. Հաստատել «Թիվ 1 ԲՇՏ», «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ների խորհուրդների նոր կազմերը.

1.1 «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ՝

Վարոսյան	Արթուր	- խորհրդի նախագահ, համայնքի ղեկավարի տեղակալ
Կոնինյան	Կարեն	- խորհրդի անդամ, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի պաշտոնակատար
Շահմուրադյան	Զավեն	- խորհրդի անդամ, համայնքապետարանի ԲԿՏ գործունեությունը համակարգող
Կոստանդյան	Լիանա	- խորհրդի անդամ, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի 1-ին կարգի մասնագետի պաշտոնակատար
Հովակիմյան	Գոհար	- խորհրդի անդամ, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար
Աբելյան	Արտուշ	- խորհրդի անդամ, համայնքի ավագանու անդամ
Նասիբյան	Ալիկ	- խորհրդի անդամ, համայնքի ավագանու անդամ:

1.2 «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ՝

Վարոսյան	Արթուր	- խորհրդի նախագահ, համայնքի ղեկավարի տեղակալ
Կոնինյան	Կարեն	- խորհրդի անդամ, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի պաշտոնակատար

Շահմուրադյան	Զավեն	- խորհրդի անդամ, համայնքապետարանի ԲԿՏ գործունեությունը համակարգող
Կոստանդյան	Լիանա	- խորհրդի անդամ, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի 1-ին կարգի մասնագետի պաշտոնակատար
Պապինյան	Վահե	- խորհրդի անդամ, ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնի պետի պաշտոնակատար
Զավարյան	Հարություն	- խորհրդի անդամ, համայնքի ավագանու անդամ
Երիցյան	Կամո	- խորհրդի անդամ, համայնքի ավագանու անդամ:

1.3 «Թիվ 1 ԲՇՏ», «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ների համար վերստուգող նշանակել համայնքապետարանի ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնակատար Հովիկ Շալաղոյանին:

2. Ընկերությունների տնօրենների խորհրդի նախագահ Արթուր Վարոսյանին.

2.1 Կազմել և հաստատել ընկերությունների հաստիքացուցակները:

2.2 Հիմք ընդունելով Ալավերդու քաղաքապետի 25.02.1998թ. թիվ 12 որոշումը՝ բնակարանների բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի ապահովման համար սպասարկման վճարը հաշվարկել բնակարանի ընդհանուր մակերեսի 1 քմ-ի համար 2020 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 18
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 261-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 37-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2020 թվականի օգոստոսի 18-ի թիվ 01/107.3.1/08609-2020 գրությունը ***որոշում եմ՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 09-ի N 268-Ա որոշման N 1 հավելվածը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 18
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 262-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղ գնացող ճանապարհի արևելյան մասում գտնվող՝ 06-060-0214-0002 ծածկագրից առանձնացված, 0.4050 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 11, նրբանցք 12, N 8 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 20

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 263-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի հարավային մասում գտնվող՝ 06-002-0054-0171 ծածկագրից առանձնացված, 0.00537 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 3/7-35/2 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 20

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 264-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու հերթական նիստ՝ 2020 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 16.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 27-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

2. Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

3. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, N 33/1 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

4. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/28-39/1 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

5. Ալավերդի համաայնքի Հաղպատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 06-060-0035-0042 ծածկագրով, 0,091 հա մակերեսով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

6. Ալավերդի համայնքի ավագանու 27.05.2020թ. N 43-Ա որոշման 1.7 մասը փոփոխելու և 30.07.2020թ. N 60-Ա որոշման 1.8 մասն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

7. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող, Հաղպատ գյուղի ակումբի շենքի 1-ին հարկի թիվ 12 և թիվ 13 տարածքներից մի մասը, թիվ 14 և թիվ 15 ոչ բնակելի տարածքները՝ 39.65 քմ ընդհանուր մակերեսով, վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու, համայնքի ավագանու 30.07.2020թ. N 63-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 21

ք. Ալավերդի